

## ԱՐԱՐԻՉ ԵՐԿՐԻ

Արարիչ երկրի  
 Պահ մ'իջի՛ր գահեղ  
 Ու քալէ՛ ինձ հետ  
 Մէջէն աշխարհի:  
 Կը ճանչնա՞ս երկիրն  
 Չոր ստեղծեցիր.  
 Մարդերն որոնց մէջ  
 Կ'ըսեն թէ դըրիր  
 Մաս մը պատկերել:  
 Տես՝ եղբայր եղբօր  
 դէմ իժ է դարձեր.  
 Մարդուն հոգիին  
 Սընունդը ստան է.  
 Աշխատանքի տեղ՝  
 Կ'ապրի գողութեամբ.  
 Իսկ շընութեանց մէջ  
 ինչպէ՞ս սէրն աճի  
 Իր սըրտին մէջ վատ:  
 Ո՞ր է գութը այն  
 Չոր դըրիր առատ,  
 Չարութեամբ հիսա  
 Լեցուած իր հոգւոյն:  
 Ո՞ր է, ցոյց տուր ինձ,  
 Կարեկցութիւնն այդ  
 Որ զայն ըստիպէ  
 Սիրտն իր երկարել  
 Մարդերուն տըկար:  
 Ոճիրներու ծով  
 Աշխարհն է հիսա,  
 Որ ատելութեանց,  
 նենգ հաշիւներու  
 Որկ մըն է զագիր:  
 Նախանձը դաւեր  
 Կը լարէ անվերջ.  
 Հըպարտութիւնն ալ  
 Կ'ընէ մարդը սին.  
 Հոգիներուն վրայ,  
 Հոգիներուն մէջ  
 նիւթն է որ կ'իշխէ:

Վասըն արծաթի  
 Վաճառքի է արդ  
 Ամէն բան, ամէն:  
 Եւ բընութեան մէջ  
 Աղմուկ ու ժըխոր  
 ինկած՝ կ'եղծանեն  
 Այնքա՞ն բիրտութեամբ  
 նուագը կեանքին  
 Որ կարելի չէ  
 Լսել խեղդուած  
 Իր քաղցր մեղեդին:  
 Այլամերժութեան  
 Մէջ խըրած մարդիկ  
 Կ'ապրին միսիայն  
 Վասն իրենց եսին.  
 Եւ արդարութեան  
 Շըպարի ետին  
 Կեղեքիչ մարդիկ  
 Յարաճուն ժպտով  
 Լիրբ ու խաբուսիկ,  
 Եւ աղօթքներով  
 Կեղծ ու սըրբապիղծ  
 Կը դաւեն իրար.  
 Կը գործեն ոճիր,  
 Ամէ՛ն վատութիւն.  
 Եւ ի՞նչ չարախիւնդ  
 Եւ մեծ աշխուժով  
 Լըծուած են մըրցման  
 Թէ ո՞վ առաւել  
 Կրնայ վերածել  
 Միաը փոշիի,  
 Եւ ոչընչացնել  
 Ամեհի կիրքով  
 Աշխարհն այս անձար:

Մըտի՛ր մարդերու  
 Չար սիրտերէն ներս  
 Եւ ըսէ՛ ինձ թէ՛  
 Ա՞յս էր ձեռակերտ  
 Երկիրը զոր դուն  
 Քեզ եւ մեզ համար  
 Հրաշքի մը հանգոյն  
 Եւ յոյսի սիրոյն  
 Չատեցիր լոյսով  
 Այդ մեծ խաւարէն,  
 Եւ ըստեղծեցիր  
 Այս մարդը տըկար  
 Որ ինքնակործան  
 Մոլուցքով մը խենթ  
 Քաշուելով ուժգին,  
 Անդիմադրելի  
 Մագնիսէն չարի  
 Ամէն օր այսպէս  
 Կ'երթայ խաւարին:  
 Արարիչ երկրի  
 Եկո՛ւր վար գահեղ,  
 Քալէ՛ խեղճ զակիդ  
 Չեղքն ամուր բռնած  
 Մէջէն անձանաչ  
 Այս չար աշխարհին.  
 Վըստահութիւն տո՛ւր,  
 Եղի՛ր ապաւէն  
 Չըզուանքով լեցուն  
 Ու սարսափահար  
 Անոր հէք հոգւոյն:

ԱՆԵԼ

Արարիչ երկրի  
 Վար իջի՛ր գահեղ  
 Ու քալէ՛ ինձ հետ.  
 Լուռ դիտէ չորսդին.